ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ УПРАВЛЕНИЕ

N 01-125

«03 11 2017թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2017 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ընդունված որոշումը, և արձակված կարգադրությունը:

Առդիր՝ 3 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» հոկտեմբերի 2017 թ. թիվ 11-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 3.2-1/ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 09.10.2017թվականի թիվ 01/07.1/4174-17 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 25-ի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ «Պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 3-Ա որոշման, թիվ 5 հավելվածի «Գիտելիքներ և հմտություններ» բաժնում.

Ավելացնել՝
«Վարչական իրավախախտումների մասին», «Թափոնների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և դրա հետ կապված այլ իրավական ակտերի մասին իմացություն:

«Իրավունքները և պարտականություններ» բաժնում

Ավելացնել՝
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է համայնքում կենցաղային աղբի հեռացման, աղբահանության հարկ վճարողների հաշվառման, ինչպես նաև դրա վճարի գանձման, համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների հետ կապված վարչական իրավախախտումների հայտնաբերման, թերությունների վերացման աշխատանքներ, որոնք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Սահմանադրությամբ», «Տեղական ինքնակառավարման մասին», «Թափոնների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աղբահանության և սան. մաքրման մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

2017 թվականի 10 հոկտեմբերի

գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«18» հոկտեմբերի 2017թ. N 13 - Ա

ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները որակյալ կատարելու համար.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ ԵՄ՝

1. Ոսկեհատի գյուղապետարանի մի շարք աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսում՝ միանվագ դրամական պարգևատրմամբ՝ համաձայն հավելվածի.

2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

2017 թվականի հոկտեմբերի «18»
գ. Ոսկեհատ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Ոսկեհատի գյուղական
համայնքի ղեկավարի
2017 թ. հոկտեմբերի «18»
N13 - Ա կարգադրության

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՄԻ ՇԱՐՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

1. Ներսիսյան Գևորգ համայնքի- ղեկավար 233.000դրամ
2. Ավագյան Ռաֆիկ -տեղակալ 181.000դրամ
3. Առաքելյան Սիլվա - գործավար 120.000դրամ
4. Դանիելյան Ալվարդ- 100.000դրամ
5. Եղիյան Եպրաքսիա - ակումբի վարիչ 100.000դրամ
6. Դիշլանյան Մուրադ- պահակ 93.200դրամ
7. Աբգարյան Շահեն-պահակ 93.200դրամ